Ձեզ Ի՞նչ է Պահանջվում Դեղատոմսով Բաց Թողնվող Դեղերի Վերաբերյալ «Medicare»-ի Պլանով Դիմումնագիրը Լրացնելու Համար

2008

Սոցիալական ապահովությունը և «Medicare»-ի և «Medicaid»-ի ծառայությունների կենտրոնները համատեղ աշխատում են դեղատոմսով բաց թողնվող դեղերի հետ կապված հավելյալ օգնությունը ձեզ հասցնելու ուղղությամբ: Որոշելու, թե, արդյոք, դուք կարող եք իրավունք ունենալ այդ հավելյալ օգնությունը ստանալու համար, Սոցիալական ապահովությանը անհրաժեշտ կլինի իմանալ ձեր եկամուտի չափը, ինչպես նաև ձեր խնայողությունների, ներդրումների և անշարժ գույքի (բացի ձեր տնից) արժեքը: Հավելյալ օգնության համար իրավասու լինելու համար.

- Ձեր տարեկան եկամուտը պետք է սահմանափակվի $15.600 դոլարով՝ անհատի համար ($21.000 դոլարով՝ միասին ապրող ամուսնացած զույգի համար):
- Նույնիսկ եթե ձեր տարեկան եկամուտը ավելի բարձր է, դուք դեռևս կարող եք հնարավորություն ունենալ ստանալու որոշակի օգնություն կապված ձեր ամսական հավելավճարների, պահման ենթակա և դեղատոմսով մասնակի տարեկան վճարների հետ: Որոշակի օրինակներ, որտեղ ձեր եկամուտը կարող է ավելի մեծ լինել, ընդգրկում են այն դեպքերը, եթե դուք կամ ձեր կինը (ամուսինը).
  —Օգնում եք ձեզ հետ ապրող ընտանիքի այլ անդամներին.
  —Ունեք աշխատանքից առաջացող հասույթ կամ
  —Ապրում եք Ալասկայում կամ Հավայան կղզիներում և
- Ձեր միջոցները պետք է սահմանափակվեն $11.990 դոլարով՝ անհատի համար ($23.970 դոլարով՝ միասին ապրող ամուսնացած զույգի համար): Միջոցներն ընդգրկում են այնպիսի բաներ, ինչպիսիք են բանկային հաշիվները, բաժնետոմսերը և պարտատոմսերը: Ձեր տունը կամ մեքենան մեր կողմից որպես միջոցներ հաշվի **չեն** առնվում:

Ձեզ ի՞նչ է անհրաժեշտ իմանալ

Որոշե'ք այն իրերը, որոնց դուք տիրապետում եք միանձնյա, ձեր կնոջ (ամուսնու) կամ այլ անձի հետ, սակայն **մի՝** ընդգրկեք ձեր տունը, մեքենաները, գերեզմանատեղերը կամ անձնական սեփականությունները:

Ստուգե՛ք ձեր ամբողջ եկամուտը:

Վաղօրոք հավաքե՛ք ձեր գրառումները՝ ժամանակը խնայելու նպատակով:

Հիշե՛ք, որ այս աշխատանքային աղյուսակը իրենից դիմում-հայտարարագիր **չի** ներկայացնում: Այս աշխատանքային աղյուսակը կարող է ձեզ օգնել հավելյալ օգնություն ստանալու համար իրական դիմում-հայտարարագիրը լրացնելու գործում:

Այն փաստաթղթերը, որոնք ձեզ կօգնեն վաղօրոք նախապատրաստվել, ընդգրկում են.

- Հաշվեցուցակներ, որոնք ցույց են տալիս ձեր հաշիվների մնացորդները բանկերում, վարկային միություններում կամ ֆինանսական այլ հաստատություններում.
- Քաղվածքներ ներդրումների մասին.
- Քաղվածքներ կյանքի ապահովագրության վկայականներից.
- Բաժնետոմսեր.
- Հարկային հայտարարագրեր.
- Գրություններ կենսաթոշակ նշանակելու մասին.
- Վճարման ցուցակների կտրոններ:

Դուք ինչպե՞ս կարող եք ստանալ լրացուցիչ տեղեկատվություն

Եթե ձեզ պահանջվի դիմում-հայտարարագրի ձևաթուղթ, ապա դիմե՛ք Սոցիալական ապահովությանը, **1-800-772-1213** (TTY **1-800-325-0778**) համարով, խնդրելով «Դեղատոմսով բաց թողնվող դեղերի վերաբերյալ «Medicare»-ի պլանի գներով օգնություն ստանալու դիմում-հայտարարա-գիր»-ը (SSA-1020): Դուք կարող եք դիմել նաև օպերատիվ ռեժիմով ***www.socialsecurity.gov*** վեբ կայքում:

Դեղատոմսով բաց թողնվող դեղերի վերաբերյալ «Medicare»-ի պլանի և դրանում ընդգրկվելու հատուկ ժամանակամիջոցների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար զանգահարե՛ք **1-800-MEDICARE** (**1-800-633-4227**; TTY **1-877-486-2048**) հեռախոսահամարով կամ այցելե՛ք ***www.medicare.gov*** վեբ կայքը: «Medicare»-ը կարող է ձեզ տեղեկացնել նաև ձեր տարածքում գործող գործակալությունների մասին՝ դեղատոմսով բաց թողնվող դեղերի վերաբերյալ «Medicare»-ի պլանների հարցում ձեզ օգնելու նպատակով:

Խնդրվում է շարունակել էջի հակառակ կողմում՝ աշխատանքային աղյուսակը լրացնելու համար:

(շրջելի)

Մեզ անհրաժեշտ է իմանալ ձեր (և ձեր կնոջ (ամուսնու)՝ եթե ամուսնացած եք և ապրում եք միասին) եկամուտի և միջոցների մասին տեղեկատվությունը.

Անունը, ազգանունը	Սոցիալական ապահովության համարը
_____	_____

Միջոցները	արժեք
Բանկային հաշիվներ, ներառյալ չեկային, խնայողական և ավանդային վկայագրերը	$ _____
Բաժնետոմսեր, պարտատոմսեր, փոխադարձ ֆոնդեր, խնայողական պարտատոմսեր, անհատական կենսաթոշակային հաշիվներ (IRA-ներ) կամ այլ ներդրումներ	$ _____
Տանը կամ այլուր պահվող կանխիկ դրամ	$ _____
Կյանքի ապահովագրության վկայականներ ձեզ համար (և ձեր կնոջ (ամուսնու) համար՝ եթե ամուսնացած եք և ապրում եք միասին)	$ _____
ԾԱՆՈՒՑՈՒՄ. *Սոցիալական ապահովությանը անհրաժեշտ է իմանալ,* ***թե որքան գումար դուք կստանաք, եթե ձեր կյանքի ապահովագրության վկայականով գումարը ստանայիք այսօր:*** *Կանխիկ գումարի ճշգրիտ չափը ճշտե՛ք ձեր ապահովագրական ընկերության կամ գործակալի հետ: Այն հավանաբար կլինի նվազ, քան այն գումարն է, որի համար ապահովագրված եք:*	
Ցանկացած այլ անշարժ գույք, բացի ձեր տնից	$ _____

Եկամուտը	Ամսական գումարը
Սոցիալական ապահովության նպաստներ	$ _____
Երկաթգծի աշխատողների կենսաթոշակի անցնելը	$ _____
Վետերաններին վճարվող նպաստներ	$ _____
Այլ կենսաթոշակներ և տարեկան ռենտաներ	$ _____
Ալիմենտներ	$ _____
Վարձակալական զուտ եկամուտ	$ _____
Բանվորական փոխհատուցում	$ _____
Այլ մարդկանց կողմից ցուցաբերվող օգնություն՝ տնային տնտեսության, ինչպես օրինակ. պարենի, գրավի, ջեռուցման վառելիքի կամ գազի, էլեկտրականության, ջրի հետ կապված ծախսերը և գույքահարկերը վճարելու համար	$ _____
Աշխատավարձ	$ _____
Ինքնաշխատությունից առաջացած զուտ եկամուտ	$ _____
Այլ եկամուտ	$ _____

Սոցիալական ապահովության հետ կապված գործերը վարելու համար դուք կարող եք դիմել որևէ մեկի օգնության: Մենք այդ անձի հետ կաշխատենք այնպես, ինչպես մենք կաշխատեինք ձեզ հետ:

Social Security Administration
SSA Publication No. 05-10128-AM
What You Need To Complete The Application For Help With Medicare Prescription Drug Plan Costs
June 2008